ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 08.02.2021թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2021/15

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի ներկայացուցիչներ

Հ. Ենգոյանի (լիազորագիր՝ տրված 02.02.2021թ.),

Ա.Պարանյանի (լիազորագիր՝ տրված 02.02.2021թ.),

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/654-2021 գրությամբ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 18.01.2021թ. թիվ 39/02-28-15 գրության հիման վրա 20.01.2021թ. թիվ 26/26/654-2021 գրությամբ նախաձեռնել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

««ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. տեղի ունեցած նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ուղարկվել է 24.12.2020թ., համապատասխանաբար վերջնաժամկետ է սահմանվել 15.01.2021թ. ներառյալ:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն 14.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը օրենքով սահմանված կարգով փոստային առաքման միջոցով պատվիրված նամակով ներկայացրել է պատվիրատուին:

Փոստային առաքանին հանձնվել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի իրավաբական հասցեի (գրասենյակի գտնվելու վայրի) փոստային ծառայությանը՝ ք. Ձորագբյուր:

Ըստ փոստային առաքման հետադարձ ծանուցման կտրոնի՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից 14.01.2021թ. ուղարկված պայմանագիրը Պատվիրատուն ստացել է 18.01.2021թ.:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից՝ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից (ըստ ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրության՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում պայմանագիրը չի ներկայացրել):

Ըստ www.gnumner.am կայքում հրապարակված տեղեկատվության՝ 18.01.2021թ. տվյալ ընթացակարգը կայտարարվել է չկայացած:

Գործի իրավական հիմքերը և հիմնավորումները

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 14-րդ ենթակետի համաձայն՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում.

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»:

Ինչպես արդեն հայտնել ենք, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն մասնակցության հայտ է ներկայացրել «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարված «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին և ճանաչվել Ընթացակարգի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է՝ անգործության ժամկետի ավարտից հետո ընտրված մասնակիցներին պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն 14.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը օրենքով սահմանված կարգով փոստային առաքման միջոցով պատվիրված նամակով ներկայացրել է Պատվիրատուին:

Փոստային առաքանին հանձնվել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի իրավաբանական հասցեի (գրասենյակի գտնվելու վայրի) փոստային ծառայությանը:

Ըստ փոստային առաքման հետադարձ ծանուցման կտրոնի՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից 14.01.2021թ. ուղարկված պայմանագիրը Պատվիրատուն ստացել է 18.01.2021թ.:

Սակայն մեզ համար անհասկանալի պայմաններում՝ գնահատող հանձնաժողովի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ ծանոթանում ենք, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից՝ սահմանված ժամկետում պայմանագիրը չի ներկայացրել:

Եվ այսպես, Գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք դարձնում հետևյալ կարևորագույն հանգամանքների վրա, այն է.

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն, խստիվ պահպանելով Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջները, պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ստանալուց (24.12.2020թ.) հետո 10 աշխատանքային օրվա ընթացքում (մինչև 15.01.2021թ. ներառյալ), այն է՝ 14.01.2021թ.՝ փոստային առաքման միջոցով, ստորագրած պայմանագիրը և պայմանագրի ապահովումը օրենքով սահմանված կարգով ներկայացրել է Պատվիրատուին, սակայն գնահատող հանձնաժողովը արձանագրել է, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում կնքված պայմանագիր չի ներկայացել:

Հատկանշական է, որ նշված որոշմամբ գնահատող հանձնաժողովի կողմից վկայակոչվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետի պահանջները, որի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

Մինչդեռ 14.01.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը՝ ինչն էլ ապացուցում է այն հանգամանքը, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն չի հրաժարվել պայմանագիր կնքելուց, ավելին, օրենքով թույլատրելի եղանակով Ընկերությունը ստորագրված պայմանագիրը ներկայացրել է Պատվիրատուին, սակայն Պատվիրատուն անտեսելով վերոհիշյալը՝ որոշել է զրկել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին

գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ երաշխավորված պայմանագիր կնքելու իրավունքից:

Մինչդեռ «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ ... մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված»: Իսկ ինչպես արդեն նշել ենք, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետը սահմանում է, որ ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, պետք է ստորագրի և պատվիրատուին ներկայացնի այդ պայմանագիրը, ինչը տվյալ դեպքում կատարել է:

Բողոքներ քննող անձի ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի տվյալները ներկայացվել են լիազոր մարմնին 18.01.2021թ., այն ժամանակ, երբ Պատվիրատուն պատվիրված նամակով ստացել է ՍՊԸ-ի կողմից ուղարկված պայմանագիրը:

Գտնում ենք, որ նման փաստական հանգամանքներում «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին չի կարող վերագրվել պայմանագրից կնքելու հրաժարում, քանի որ, ինչպես արդեն նշվել է, 14.01.2021թ. «ՀԱՅՓՈՍՏԻ» ՓԲԸ-ի միջոցով ՍՊԸ-ն Պատվիրատուին է ուղարկել կնքված պայմանագիրը:

Ի հավաստումն վերոհիշյալ փաստի՝ բողոքներ քննող անձին խնդրում ենք հարցում անել Պատվիրատուին՝ 14.01.2021թ. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից փոստային առաքման միջոցով ուղարկված համապատասխան պայմանագիրը և պայմանագրի ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիրը) ստանալու փաստը հաստատելու համար:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին խնդրում ենք ուշադրություն դարձնել մի քանի այլ կարևոր հանգամանքների վրա, մասնավորապես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին պայմանագիր կնքելուց զրկելու որոշումը եղել է հրապարակված՝ միայն 18.01.2021թ. www.gnumner.am համացանցային կայքում հրապարակված Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարությամբ (գնահատող հանձնաժողովի որոշումը ենթադրաբար կայացվել է 15.01.2021թ.): Մինչդեռ 2021թ. հունվարի 15-ը դեռևս հանդիսանում էր պայմանագրի նախագիծը կնքելու, ստորագրելու և համապատասխան փաստաթղթերով հանդերձ Պատվիրատուին ներկայացնելու համար նախատեսված 10-րդ

աշխատանքային օրը (պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը ներկայացնելու վերջնաժամկետ էր սահմանվել 15.01.2021թ. ներառյալ):

Այս պարագայում, եթե «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին որոշումը կայացվել է 15.01.2021թ., ուստի հատկանշական է այն փաստը, որ 15.01.2021թ. դեռևս հանդիսանում էր Պայմանագիրը՝ Պատվիրատուին ներկայացնելու համար նախատեսված 10-րդ աշխատանքային օրը, իսկ եթե գնահատող հանձնաժողովը հայտը մերժելու մասին որոշումը կայացրել է 18.01.2021թ., ապա այս պարագայում էլ հատկանշական է, որ մեր ձեռքում է գտնվում «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով Պատվիրատուին ուղարկված ծրարի հիման վրա տրամադրված հետադարձ ծանուցման անդորրագիրը, որտեղ հստակ երևում է, որ Պատվիրատուն 18.01.2021թ. ստացել է մեր կողմից ստորագրված, կնքված պայմանագիրը:

Մյուս հանգամանքը, որի վրա խնդրում ենք ուշադրություն դարձնել բողոքներ քննող անձին, վերաբերվում է հետևյալին. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի տնօրենը 26.12.2021թ. գտնվել է ԱՄՆ-ում և հանգամանքների բերումով ՀՀ է վերադարձել միայն 16.01.2021թ., և հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի տնօրենի ժամանակավոր պարտականությունները կատարող փոխտնօրեն Ա.Բալյանի կողմից որոշում է կայացվում Պայմանագիրը՝ Պատվիրատուին ներկայացնելու համար նախատեսված 10-րդ աշխատանքային օրը պահպանելու նպատակով, 9-րդ աշխատանքային օրը «ՀԱՅՓՈՍՏ» ՓԲԸ-ի միջոցով «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ին է ուղարկվել Պայմանագիրը:

Բողոքներ քննող անձին սույն ընթացակարգը քննելիս և ՍՊԸ-ի մեղավորության հարցը որոշելիս խնդրում ենք հաշվի առնել նաև «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից ՀՀ էներգետիկ անվտանգության համար ստրատեգիական նշանակության արտադրանք արտադրելու հանգամանքը:

Մասնավորապես, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ Ընկերությունը հիմնվել է 2016թ.-ին «ԷԿՐԱ» գիտաարտադրական խմբի կողմից: Հանդիսանալով տարածաշրջանում միակ նմանատիպ արտադրական կազմակերպություն, ընկերությունը գործունեություն է ծավալում նախագծման աշխատանքների, արտադրության, թեստավորման, մոնտաժման և կարգաբերման, երաշխիքային և ետերաշխիքային սպասարկման ոլորտում: Ընկերությունը տարեկան արտադրում է մոտ 250 ռելեական պաշտպանության 6-750 կՎ վահանակներ:

Ընկերությունն արտադրում է.

- Ռելեական պաշտպանության պահարաններ,
- Ռելեական պաշտպանություն և ավտոմատիկա 35-110-220 կՎ և 330-750 կՎ ենթակայանների համար,
- Էլեկտրակայանների, հիդրոէլեկտրակայանների և ջերմաէլեկտրակայանների սարքավորումներ,
- Նոր սերնդի տերմինալներ,
- Ենթակայանների ավտոմատացման պրոցեսների ղեկավարման համակարգեր,
- Բաշխիչ սարքավորումներ,
- Ռելեական պաշտպանության պահարանների թեսթավորման սարքավորումներ /OMICRON/,
- Վերականգնվող էներգիայի ստացման համար նախատեսված սարքավորումներ
- Հաճախականության կարգավորման սարքավորումներ
- Սահուն թողարկման սարքավորումներ

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերությունը հանդիսանում է Հայաստանում ԳԿ «ЭКРА», «Weidmuller», «Etimat», «КомплектЭнерго», «ЭлекомЛогистикс», «TKD Kabel» և «ДОЗА» ընկերությունների և բրենդների պաշտոնական ներկայացուցիչը:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊ ընկերությունն առաջարկում է սարքավորումներ և նորարարական լուծումներ նաև էներգետիկայի ոլորտի բարելավման, կորուստների նվազեցման և ՕԳԳ բարձրացման ուղղությամբ, որոնք էլ իրենց հերթին նպաստում են էներգետիկ ենթակառուցվածքների անվտանգության ապահովմանը:

Ընկերությունը փոխարդյունավետ համագործակցություն է իրականացնում ՀՀ էներգոհամակարգի գրեթե բոլոր խոշոր կազմակերպությունների հետ: «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ, «Բարձրավոլտ Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ, էներգահամակարգում գեներացնող և շահագործում իրականացնող այլ կազմակերպություններ:

Ընկերության հիմնական գործունեությունն իրականացնող անձնակազմը ինժեներներ են՝ բարձրագույն կրթությամբ և էներգետիկ ոլորտում եզակի փորձով:

Քանի որ ընկերության գործունեությունն ունի կարևոր նշանակություն որոշակի սարքավորումների մատակարարման և սպասարկման տեսանկյունից, 2020թ պատերազմի առաջին օրերին ընկերության զորահավաքի ենթակա անձնակազմը կառավարության կողմից ստացել է չզորակոչվելու իրավունք, ընկերության բնականոն գործունեությունը չխաթարելու համար: Նույն այդ օրերին ընկերության անձնակազմից 4

ինժեներ գործուղվել են Բերձորի մերձակայքում գտնվող «Աղավնո» ենթակայանում սարքավորումների շտապ կարգաբերման աշխատանքներ իրականացնելու, որպեսզի ապահովվի դեպի Արցախ էներգետիկ ենթակառուցվածքների անխափան աշխատանքը:

Ընկերությունը հանդիսանում է համաշխարհային ներկայացվածություն ունեցող ABB, SIEMENS, General Electric և այլ կազմակերպությունների միակ տեղական այլընտրանքը տարածաշրջանում, ինչը բացառիկ ստրատեգիական նշանակություն ունի Հայաստանի էներգետիկ անվտանգության համար:

Ելնելով վերոնշված փաստերից ու փաստական հանգամանքներից՝ խնդրում ենք «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին չվերագրել «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված պայմանագրի կնքումից հրաժարում, և վերջինիսի չներառել «Գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում»»:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/15 ընթացակարգի շրջանակներում 03.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցիչների մասնակցությունը, ովքեր հայտնել են վերոհիշյալ գրությամբ ներկայացված դիրքորոշումը:

3. <u>«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն (հետայսու նաև՝ Պատվիրատու) ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2021թ. թիվ 39/02-28-15 գրությամբ հայտնել է հետևյալը.

«2021թ.-ի նոյեմբերի 26-ին հայտարարված «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար էլեկտրական օդաճնշակի ձեռքբերման ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատման արդյունքում հաղթող մասնակից է ճանաչվել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն:

«Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից պայմանագիրը կնքելու իրավասության առաջացման օրը՝ 24.12.2020թ.-ին, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին ծանուցվել է (և՛ armeps համակարգի ոչ ավտոմատ ծանուցման միջոցով, և՛ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից հայտով ներկայացված Հավելված 1-ում նշված էլեկտրոնային հասցեին) պայմանագիր կնքելու առաջարկը և N ԵՄ-ԳՀԱՊՁԲ-

20/107-1 ծածկագրով պայմանագրի նախագիծը, միաժամանակ տեղեկացնելով, որ ծանուցման մեջ նշված ժամկետում (ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում) վերջինիս կողմից պայմանագիրը չստորագրելու և պայմանագրի և որակավորման ապահովումները չներկայացնելու դեպքում ընկերությունը կզրկվի պայմանագիրը ստորագրելու իրավունքից՝ համաձայն գնումների մասին ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ կետով սահմանված պահանջների:

Հայտնում ենք, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից վերոնշյալ փաստաթղթերը սահմանված ժամկետում չեն ներկայացվել:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է՝ հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» պարբերությամբ սահմանված պահանջները:

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 45-րդ կետով սահմանված պահանջների համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում եմ Ձեզ՝ վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ սկսելու նպատակով:

Միաժամանակ հայտնում եմ, որ սույն գնման ընթացակարգի շրջանակներում ձեռք բերվող գնման առարկաները ներառված են հաստատված գնումների պլանում և ներկայացնում եմ սահմանված կարգով www.gnumner.am կայքում հրապարակած լինելը հավաստող հղումը՝ https://gnumner.am/website/images/original/3cf48e27.pdf»:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2021/15 ընթացակարգի շրջանակներում 03.02.2020թ. ժամը 10:15-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2021/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2021/15 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ

(հետայսու նաև՝ Ընթացակարգ), որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է՝ անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

3. «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին 24.12.2020թ. էլեկտրոնային եղանակով ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը:

4. 18.01.2021թ. տեղեկագրում (www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայք) հրապարակված՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հետ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր չի կնքվել:

5. Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2021թ. թիվ 39/02-28-15 գրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից, այն հիմքով, որ վերջինս «Գնումների մասին» ՀՀ օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/654-2021 գրությունը, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի 18.01.2021թ. թիվ 39/02-28-15 գրությունը՝ կից փաստաթղթերով, «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի 04.02.2021թ. դիրքորոշումը և կից փաստաթղթերը, գործում առկա նյութերը, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու

իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի համաձայն՝

1. Պայմանագիր կնքվում է գնահատող հանձնաժողովի որոշման հիման վրա՝ պատվիրատուի կողմից:

2. Սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը: Ընդ որում, պայմանագիրը կարող է կնքվել ոչ շուտ, քան սույն օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալու օրվան հաջորդող երկրորդ աշխատանքային օրը:

3. ***Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:*** Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի գ) պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ՝ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հավաստում՝ ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում, ներկայացրած գնային առաջարկի չափով որակավորման ապահովում ներկայացնելու պարտավորության մասին:

Կարգի 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝

12) ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ապրանքների գնման դեպքում պայմանագրի նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը.

13) ***ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում***: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Այսպես, «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կարիքների համար հայտարարվել է «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 08.12.2020թ. նիստի թիվ 2 արձանագրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն ճանաչվել է Ընթացակարգի ընտրված մասնակից և նույն արձանագրությամբ որոշվել է անգործության ժամկետի ավարտից հետո վերջինիս պայմանագիր կնքելու առաջարկ ներկայացնել:

«ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին 24.12.2020թ. էլեկտրոնային եղանակով ուղարկվել է պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը:

18.01.2021թ. տեղեկագրում հրապարակված՝ Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին հայտարարության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի հետ Ընթացակարգի 1-ին չափաբաժնի մասով պայմանագիր չի կնքվել:

Պատվիրատուի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 18.01.2021թ. թիվ 39/02-28-15 գրության համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից այն հիմքով, որ վերջինս Օրենքով սահմանված ժամկետում չի ստորագրել պայմանագիրը և չի ներկայացրել պայմանագրի և որակավորման ապահովումները:

Ընթացակարգի հրավերի 9.3-րդ, 9.4-րդ և 9.5-րդ ենթակետերի համաձայն՝

9.3 ***Ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով***: Ընդ որում՝ պայմանագրում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը:

9.4 Պայմանագիր կնքելու մասին պատվիրատուի ծանուցումն ընտրված մասնակցին ուղարկելու օրը հանձնաժողովի քարտուղարը համակարգի միջոցով ընտրված մասնակցի էլեկտրոնային փոստին ուղարկում է ծանուցում՝ պայմանագիր կնքելու առաջարկը տրամադրված լինելու մասին:

9.5 ***<u>Եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում որակավորման և պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:</u>***

Ընդ որում՝ ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դրա ներկայացման գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում և հաստատմանը հաջորդող աշխատանքային օրը ուղեկցող գրությամբ տրամադրվում է ընտրված մասնակցին:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ ***Օրենքի 10-րդ հոդվածով սահմանված անգործության ժամկետը լրանալուն հաջորդող չորս աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն ծանուցում է ընտրված մասնակցին՝ ներկայացնելով պայմանագիր կնքելու առաջարկը և պայմանագրի նախագիծը:***

Նույն հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***<u>եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:</u>***

Այսպիսով՝ գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանվում է հստակ ժամկետ պայմանագիրը ստորագրելու, ինչպես նաև պայմանագրի և որակավորման ապահովումները ներկայացնելու համար, որոնք չպահպանելու դեպքում մասնակիցը զրկվում է պայմանագիրը կնքելու իրավունքից:

Մինչդեռ արձանագրում եմ, որ Ընկերությունը ՍՑ-ՆԳ-2021/15 ծածկագրով ընթացակարգի շրջանակներում Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ուղղված գրությամբ հայտնել է, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն սահմանված ժամկետում՝ 14.01.2021թ., փոստային առաքման միջոցով, ստորագրված պայմանագիրը օրենքով սահմանված կարգով պատվիրված նամակով ներկայացրել է Պատվիրատուին՝ կցելով «Հայփոստ» ՓԲԸ-ի N 2 առաքանու անդորրագիրը, որի համաձայն՝ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն 14.01.2021թ. նամակ է ուղարկել ք. Երևան, Մարշալ Բաղրամյան 78 հասցեում գտնվող «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ՝ միաժամանակ կցելով «Հայփոստ» ՓԲԸ-ի փոստային ծանուցագիրը՝ 18.01.2021թ. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի կողմից համապատասխան փաստաթղթերը ստանալու վերաբերյալ:

Վերը նշված փաստական հանգամանքներով պայմանավորված՝ Գնումների հետ կապված բողոքներ քննող անձը Պատվիրատուին ուղղված 03.02.2021թ. թիվ /ԲՔԱ-ԳՆ/1/1330-2021 գրությամբ խնդրել է հայտնել՝ արդյոք 18.01.2021թ. «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի Մետրոպոլիտեն» ՓԲԸ-ն ստացել է «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից կնքված պայմանագիրը, թե՞ ոչ:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Պատվիրատուն 05.02.2021թ. թիվ 39/02-28-49 գրությամբ հայտնել է հետևյալ.

«Սույն թվականի հունվարի 18-ին «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի փաստաթղթաշրջանառության համակարգ է մուտք եղել «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ի կողմից «Հայփոստ» ՓԲԸ-ի միջոցով ուղարկված գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան միակողմանի ստորագրված N «ԵՄ-ԳՀԱՊՁԲ-20/107-1» ծածկագրով պայմանագիրը՝ հաստատված 2 օրինակից և պայմանագրի ու որակավորման ապահովումները՝ միակողմանի հաստատված հայտարարության՝ տուժանքի ձևով, ուղեկցող գրությամբ»:

Այսպես, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ **10 աշխատանքային օրվա ընթացքում**, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից: Պայմանագրով կանխավճար նախատեսվելու դեպքում սույն կետով նախատեսված ժամկետը սահմանվում է 15 աշխատանքային օր:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ ***մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվում են ժամկետում հանձնված***:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Այսպիսով՝ գնահատելով գործում առկա ապացույցները, համադրելով կիրառման ենթակա նորմերի հետ՝ արձանագրում եմ, որ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ն, 24.12.2020թ. ստանալով պայմանագիր կնքելու առաջարկը, Օրենքով սահմանված 10 աշխատանքային օրյա ժամկետում՝ 14.01.2021թ., կապի կազմակերպությանը, այն է՝ «Հայփոստ» ՓԲԸ-ին,

հանձնել է ստորագրված պայմանագիրը, պայմանագրի ու որակավորման ապահովումները, որոնք, սակայն, Պատվիրատուի կողմից ստացվել են 18.01.2020թ., որպիսի պայմաններում գտնում եմ, որ Ընկերությունը թույլ չի տվել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «բ» ենթակետով նախատեսված խախտում, և առկա չեն վերջինիս գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցներից ցուցակում ներառելու հիմքերը, քանի որ Ընկերությունը, որպես ընտրված մասնակից, չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 20.01.2021թ. թիվ 26/26/654-2021 գրությամբ «ԷԿՐԱ ԿՈՎԿԱՍ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**